Սոյն տասն-մէկ անդամք միայն ըստացած լինելով բացարձակ առաւելութիւն, մնացեալ ընտրելեաց մէջէն առաւելագոյն քուէ ստացող վեց անուանց վերայ համեմատական քուէարկութիւն կատարուեցաւ։ Սոյն քուէարկութեան մասնակցեցան 26 երեսփոխանք և Կրօնական ժողովոյ անդամ ընտրուեցան՝

| | | |

3 Մայիսի. — Ս. Սինոդը հիմնուելով Երևանայ Կոնսիստորիայի յայտարարութեան վրայ, ընդ համարաւ 1057, ապրիլ 4, վճռեց Բաշ Նորագեալու նախկին գործակալ Տէր Գասպարեանց Սահակ քահանային, նորա ըմբոստութեան և ինքնագլուխ գործողութեանց համար, ենթարկել եռամեայ ապաշխարանաց, առ դրան եկեղեցւոյն, Սաղմոս ի ձեռին։ Նոյնպէս ենթարկել ապաշխարանաց, չորս ամիս ժամանակով, Ղզլչախչախ գիւղի Մկրտչեանց Մարկոս քահանային, նորա կատարած պսակի համար՝ տասնեօթամեայ օրիորդ Շուարի Գրիգորեանց ընդ անչափահաս տասնամեայ Ադամայ Վարդանեանց։ Այդ պսակն՝ եթէ չիք արգելք ընդդէմ կանոնաց Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ և Կայսերական օրինաց — համարել վաւերական, սակայն անջատել ամուսիններին և յանձնել ծնողաց պահպանութեան, մինչև Ադամի արբունք հասանելը։

—

4 Մայիսի. — Ս. Սինոդը հիմնուելով Ղարաբաղու Կոնսիստորիայի յայտարարութեան վրայ, ընդ համարաւ 333, մարտի 15, վճռեց ենթարկել Տօլանլար գիւղի Յովհաննէս-Բէկեան Սարգիս քահանային երեքամեայ եկեղեցական ապաշխարանաց Սևանայ վանքում, նորա զօշաքաղութեամբ կատարած պսակների համար. այլ և որոշեց տեղափոխել նորան Տօլանլար գիւղից Թաղասեռ գիւղը։ Այս քահանայի կատարած մի քանի ուրիշ չհաս աղգակցական պսակների մասին վերսքննութիւնը շարունակւում է։

—

18 Մայիսի. — Ս. Սինոդը հիմնուելով Վրաստանի և Իմէրէթի Կոնսիստորիայի յայտարարութեան վրայ, ընդ համարաւ 1435, ապրիլ 8, վճռեց Նաւուր գիւղի Տէր Յակովբեանց Մովսէս քահանային, նորա ինքնագլուխ կատարած աղգակցական և խնամէական չհաս ինն պսակների համար, զրկել քահանայութեան սուրբ կարգից և վերադարձուցանել իւր նախկին աշխարհական վիճակը։ Այդ քահանայի կատարած բոլոր չհաս պսակներն համարել անվաւեր. ի խրատ և ի զգուշութիւն։

27 Մայիսի։ — Ս. Սինոդը լսեց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ Կոնսիստորիայի յայտարարութիւնը ընդ համարաւ 1090 ապրիլ 19, որով յայտնումէ թէ՝ Սիմֆերոպոլցի և Մելիտոպոլցի մեծարգոյ վաճառականք՝ Պ. Պ. Պետրոս Սահակեան Թոփալեանց և Յովհաննէս Գէորգեան Զեռնիկեանց տեսնելով Մելիտոպոլ քաղաքում Հայոց հոգևոր ծխական դպրոց ունենալու անհրաժեշտ կարևորութիւնը, որոշել են ընծայել յանուն Աւետման Եկեղեցւոյ քաղաքին, ինքեանց ընկերութեամբ պատկանած սեպհական տունը, 11,000 ռուբլու արժողութեամբ, որ և գտնուումէ Քիզիարքա գիւղում Մելիտոպոլի մօտ։ Ս. Սինոդն հրամայեց կատարել պարտուպատշաճ տնօրինութիւն այդ նուիրաբերութիւնն ստանալու համար, ի վերայ հիման 1011 յօդ. I մասին XI հատ. կոճեղ օրինաց։

—

27 Մայիսի։ — Խոր-Վիրապու Ս. Գրիգոր և Վաղարշապատու Ս. Հռիփսիմէի վանուց առաւել բարեկարգութեան համար Ս. Սինոդը հրամայեց. Արժան. Պօղոս վարդապետ Մալխասեանին արձակելով Խոր-վիրապի Ս. Գրիգորի վանուց վանահայրութեան պաշտօնից՝ կարգել վանահայր Ս. Հռիփսիմէի։ Ս. Հռիփսիմէի վանահայր Արժ. Ստեփաննոս վարդ. Իսկեանդարեանցին կարգել միաբան և օգնական վանահօր Երնջակու Ս. Կարապետի վանուց, և Խոր-վիրապի միաբան Արժ. Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեանին կարգել վանահայր նոյն Խոր-վիրապու Ս. Գրիգորի վանուց։